



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հոկտեմբերի 2016 թվականի  
Թիվ 375-Ա, քաղաք Երևան

### «ՁՈՐԱԳԵՏ ՀԻՂՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԵՎ «ԷՆԵՐԳՈ ԻՆՎԵՍՏ ՀՈԼԴԻՆԳ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի հոկտեմբերի 3-ի դռնբաց նիստում քննարկեց «Ձորագետ Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ (այսուհետ՝ «Ձորագետ Հիդրո» ընկերություն) և «Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական (այսուհետ՝ «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ընկերություն) ընկերությունների (այսուհետ նաև՝ Ընկերություններ) համակենտրոնացման վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Ընկերությունները 2016 թվականի սեպտեմբերի 16-ի դիմումով (այսուհետ՝ Դիմում) դիմել են Հանձնաժողով հայտնելով, որ «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ընկերությունը ցանկանում է ձեռք բերել «Ձորագետ Հիդրո» ընկերության 30 տոկոս բաժնեմասը: Համակենտրոնացման նպատակն է նոր միջոցների ներգրավումը և «Ձորագետ Հիդրո» ընկերության արտադրության ծավալների ավելացումը:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ: Դիմումին կից ներկայացվել են Ընկերությունների կողմից կազմված հայտարարագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ներկայացված տեղեկությունների համաձայն, «Ձորագետ Հիդրո» ընկերությունն արտադրում և իրացնում է էլեկտրական էներգիա: Վերջինիս մասնակիցներն են հանդիսանում «Ռեալէներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 70 տոկոս, Ֆիզիկական անձինք Արմեն Պետրոսյանը՝ 19 տոկոս և Լեոնիդ Արևշատյանը՝ 11 տոկոս բաժնեմասերով: «Ձորագետ Հիդրո» ընկերության 2015 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է

դրամ:

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ընկերությունը հիմնադրվել է 2015 թվականի նոյեմբերի 25-ին, իրականացնում է ներդրումներ, այլ գործունեությամբ չի զբաղվում: Վերջինիս միակ բաժնետերն է հանդիսանում

«Էներգո Ինվեստ

Հոլդինգ» ընկերության 2015 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է

դրամ: «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ընկերությանն է

պատկանում նաև «Ինվեսթմենթ Մեդիա Գրուպ (Այ-Էմ-Ջի)» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 90 տոկոս բաժնեմասը (ձեռք է բերել 2016 թվականի հունիսի 1-ին, հիմնական գործունեությունը՝ այլ աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրություն, ներկայումս գործունեություն չի իրականացնում):

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքի տվյալների համաձայն, 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 7 798,1 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որից «Հրազ ՋԷԿ»

ընկերության մասնաբաժինը կազմել է 546,8 մլն կվտժ (ընդհանուր արտադրության ծավալի 7 տոկոսը): Միաժամանակ նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում արտադրված էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը կազմել է 7 433,3 մլն կվտժ, որից «Հրազ ՁԷԿ» ընկերության մասնաբաժինը կազմել է 507,9 մլն կվտժ (ընդհանուր իրացման ծավալի 7 տոկոսը): Դիմումով ներկայացված տեղեկությունների համաձայն «Ձորագետ Հիդրո» ընկերության 2015 թվականի իրացման ծավալը կազմել է 89,1 մլն կվտժ էլեկտրաէներգիա: Վերջինիս և «Հրազ ՁԷԿ» ընկերությունների մասնաբաժինը միասին ընդհանուր իրացման ծավալում կկազմի 8 տոկոս, և հետևաբար կարելի է եզրակացնել, որ նշված գործարքը տվյալ ապրանքային շուկայում չի հանգեցնի գերիշխող դիրքի առաջացմանը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի հայտարարագրի ձևի մասին» թիվ 191-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Փաստորեն համակենտրոնացման մասնակիցների ակտիվների արժեքները գերազանցում են Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 191-Ն որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը, ուստի կարելի է եզրակացնել, որ նշված գործարքն Օրենքի իմաստով հանդիսանում է համակենտրոնացում և այն ենթակա է հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ նշված համակենտրոնացումը մրցակցությանը չի խոչընդոտում և ենթակա է թույլատրման:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածները և 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը՝ Հանձնաժողովը.

#### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Թույլատրել «Ձորագետ Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ և «Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությունների համակենտրոնացումը՝ «Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Ձորագետ Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 30 տոկոս բաժնեմասի ձեռքբերման միջոցով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Ձորագետ Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ և «Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում: